Արձանագրություն թիվ 2
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
ՀՀ Շիրակի մարզային հանձնաժողովի 2017 թվականի
մայիսի 23-ի նիստի

Նիստը վարում էր - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Հ. Արշակյանը:

Նիստին մասնակցում էին՝

Ա. Մարգարյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի անդամ.

Լ. Գորգինյան ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.

Ա. Խաչատրյան - Գյումրու «Արաքս Կենտրոն» ԲՀԿ նախագահ, հանձնաժողովի անդամ,

Ռ.Ռաշոյան - Գյումրու «Հաշմանդամների ասոցիացիա» ՀԿ նախագահ, հանձնաժողովի անդամ.

Ա. Գյունաշյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար:

Նիստին մասնակցում էին հրավիրվածներ՝

Ֆ.Սարգսյան - «Հայկական Կարիտաս» ԲՀԿ –ի «Տարեցների Ցերեկային խնամքի կենտրոն» ծրագրի ղեկավար,

Ս.Գրիգորյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ.

Օրակարգ – ՀՀ Շիրակի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, սոցիալական պաշտպանությանն ու իրավունքների ապահովմանն ուղղված 2018 թվականին նախատեսված միջոցառումների վերաբերյալ:

/Հաղորդում՝ Ա.Գյունաշյան - հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով մարզային հանձնաժողովի քարտուղար/:

Լսեցին - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ա և ՍԱ վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար Ա.Գյունաշյանի հաղորդումը՝ Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը, նրանց իրավունքների ապահովմանն ու սոցիալական ներառմանն ուղղված՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից 2018 թվականի համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ տարեկան ծրագրում ներառելու համար.

Ելույթ ունեցան՝ Ռ.Ռաշոյանը, Լ. Գորգինյանը, Ս.Գրիգորյանը:
Նիստում քննարկումներն ամփոփեց հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Հ. Արշակյանը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից 2018 թվականի համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությանը՝ տարեկան ծրագրում ներառելու համար:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գյունաշյան